ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1197-25.11.2025-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 5-րդ հոդված	Առաջին մասի 5-րդ կետում՝ 1) «նոր ծնված երեխան» բառերից հետո լրացնել « ունի» բառը 2) «Հայաստանի Հանրապետության քաղաքացի է» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր» բառերով» 3) հանել « և օտարերկրյա պետությունում այդ երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստ չի նշանակվել (վճարվել),» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	Պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 5-րդ հոդված	1-ին մասում՝ «4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11-րդ մասով. «11. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են, երբ երեխան ծնվել է մինչև 2026 թվականի սեպտեմբերի 1-ը:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:

3.	Պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 6-րդ հոդված	Առաջին մասի 5-րդ կետում՝ 1) «նոր ծնված երեխան» բառերից հետո լրացնել « ունի» բառը 2) «Հայաստանի Հանրապետության քաղաքացի է» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր» բառերով»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	Պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 8-րդ հոդված	Նոր լրացվող 26.1.հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում «երեխան Հայաստանի Հանրապետությա քաղաքացի է» բառերը փոխարինել «երեխան ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
5.	Պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 8-րդ հոդված	Նոր լրացվող 26.2.-րդ հոդվածի 2-րդ մասում «դիվանագիտական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձին,» բառերից հետո լրացնել «նրա՝ օտարերկրյա պետությունում գտնվող ամուսնուն,» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
6.	Պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 8-րդ հոդված	Նոր լրացվող 26.2.-րդ հոդվածի 7-րդ մասի 4-րդ կետում «Հայաստանի Հանրապետությունում,» բառերից հետո լրացնել «բացառությամբ սույն օրենքի 26.1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքի» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
7.	Պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 8-րդ հոդված	Նոր լրացվող 26.2.-րդ հոդվածի 12-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝ «12. Սույն օրենքի 26.1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքում նպաստի վճարումը շարունակվում է Կառավարության սահմանած կարգով:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:

8.	Պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 8-րդ հոդված	Նոր լրացվող 26.3.-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում «դեպքում,» բառից հետո լրացնել «բացառությամբ սույն օրենքի 26.1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքի.» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
9.	Պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 10-րդ հոդված	Նոր լրացվող 1.1-ին մասում՝ «դիվանագիտական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձին,» բառերից հետո լրացնել «նրա՝ օտարերկրյա պետությունում գտնվող ամուսնուն,» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
10.	Պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 11-րդ հոդված	Լրացնել նոր 2-րդ կետով, հետևյալ բովանդակությամբ՝ «2) 8-րդ կետը «դեպքում» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքի 28.4-րդ հոդվածի 1.1-ին կետով սահմանված դեպքի» բառերով. »՝ համապատասխանաբար փոփոխելով հոդվածի կետերի համարակալումը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
11.	Պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	Նախագծի 17-րդ հոդված	Լրացնել նոր նախադասությամբ՝ «Մինչև երրորդ եւ յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստի գումարը նշանակելու եւ վճարելու կարգը Կառավարության կողմից սահմանելը դրամական աջակցությունը շարունակվում է վճարվել մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը սահմանված կարգով:»:	Ընդունվել է:	Ընդունվել է: